11
ՆՈՅԵՄԲԵՐԻ
2021

44-ՕՐՅԱ ՊԱՏԵՐԱԶՄԻՑ ՀԵՏՈ ԵԱՀԿ ՄԽ ՀԱՄԱՆԱԽԱԳԱՀՆԵՐԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՈՎԱՆԴԱԿԱՅԻՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ. ԻՆՉՈ՞Ւ ԱՆՀԵՏԱՑԱՆ ՀԻՄՆԱՐԱՐ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ, ԵՎ ԻՆՉ ԵՆՔ ՀԱՍԿԱՆՈՒՄ «ԿԱՐԳԱՎԻՃԱԿ» ԱՍԵԼՈՎ

44-ՕՐՅԱ ՊԱՏԵՐԱԶՄԻՑ ՀԵՏՈ ԵԱՀԿ ՄԽ ՀԱՄԱՆԱԽԱԳԱՀՆԵՐԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՈՎԱՆԴԱԿԱՅԻՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ. ԻՆՉՈ՞Ի ԱՆՀԵՏԱՑԱՆ ՀԻՄՆԱՐԱՐ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ, ԵՎ Ի՞ՆՉ ԵՆՔ ՀԱՍԿԱՆՈՒՄ «ԿԱՐԳԱՎԻՃԱԿ» ԱՍԵԼՈՎ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 1

1. ՀԻՄՆԱՐԱՐ ՍԿԶԲՈՒՆՔՆԵ՞Ր, ԹԵ՞ ԿԱՐԳԱՎԻՃԱԿ 1

2. 44-ՕՐՅԱ ՊԱՏԵՐԱԶՄԻՑ ՀԵՏՈ ԵԱՀԿ ՄԽ ՀԱՄԱՆԱԽԱԳԱՀՆԵՐԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՈՎԱՆԴԱԿԱՅԻՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ 3

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ 6

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

44-օրյա պատերազմից և Հայաստանի ու Արցախի համար դրա ողբերգական արդյունքից՝ նոյեմբերի 9-ի կապիտուլյացիայից անցել է շուրջ մեկ տարի, սակայն ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահության ձևաչափով Արցախյան հիմնահարցի կարգավորման շուրջ բանակցային գործընթացը դեռևս լիարժեքորեն չի վերականգնվել, իսկ հակամարտության կարգավորման հեռանկարները մշուշոտ են: Թեև պատերազմի ավարտից կարճ ժամանակ անց՝ 2020թ. դեկտեմբերի 3-ին, համանախագահ երկրների արտգործնախարարների հայտարարությունը հակամարտության համապարփակ կարգավորման գործընթացի վերսկսման որոշակի հույսեր արթնացրեց, սակայն հետագա ամիսներին ՄԽ հայտարարությունները էական բովանդակային փոփոխությունների ենթարկվեցին և տարածվող տեքստերից աստիճանաբար դուրս մղվեց հակամարտության կարգավորման հիմնարար սկզբունքների հիշատակումը: Սույն հոդվածի շրջանակներում փորձել ենք հասկանալ, թե ինչո՞ւ ՄԽ պաշտոնական հայտարարություններից անհետացան հիմնարար սկզբունքները, և ինչո՞ւ են դրանց մասին հիշատակումները շատ ավելի կարևոր, քան Արցախի կարգավիճակի մասին Հայաստանից հնչող հեղհեղուկ ձևակերպումները:

1. ՀԻՄՆԱՐԱՐ ՍԿԶԲՈՒՆՔՆԵ՞Ր, ԹԵ՞ ԿԱՐԳԱՎԻՃԱԿ

Դեռևս նախքան 44-օրյա պատերազմը, 2018թ. Հայաստանում տեղի ունեցած իշխանափոխությունից հետո նոր իշխանությունները Արցախյան հիմնախնդրի կարգավորման շուրջ պաշտոնական տեղեկատվական հոսքերում սկսեցին հաճախակի կիրառության մեջ դնել «անվտանգություն և կարգավիճակ» տերմինները՝ փորձելով հակամարտության կարգավորման սեփական տեսլականը կապել հենց այս ելակետերի հետ: Զուգահեռաբար ընթանում էր ԵԱՀԿ ՄԽ համանախագահության շրջանակներում երկար տարիներ բանակցված և համաձայնեցված Մադրիդյան 3 հիմնարար սկզբունքները՝ ուժի չկիրառման, տարածքային ամբողջականության և ժողովուրդների իրավահավասարության ու ինքնորոշման սկզբունքները կասկածի տակ դնելու, դրանց որոշակիությունը վիճարկելու գործընթաց: ՀՀ նորընտիր վարչապետը նույնիսկ պնդում էր, որ համանախագահները պետք է իրեն բացատրեն հիմնարար սկզբունքների էությունը:

Այսպես, ներկայացնենք որոշ մեջբերումներ հիմնարար սկզբունքների վերաբերյալ վարչապետ Փաշինյանի հայտարարություններից. «Ինչպե՞ս ես կարող եմ ասել՝ ընդունելի են այդ սկզբունքները, թե ոչ, մինչ այն, երբ կհասկանամ ինչ են

մտածում այդ մասին իրենք՝ համանախագահները»[1]: «Մադրիդյան սկզբունքների ամենակարևոր առավելությունն այն է, որ ով ինչպես ուզում, մեկնաբանում է, կողմերից յուրաքանչյուրը»[2]: «Մենք ասել ենք, որ Մադրիդյան սկզբունքների շուրջ մեր պարզաբանումները պետք է ստանանք: Իհարկե, այդ պրոցեսն ընթանում է, բայց մենք դեռևս չենք ստացել Մադրիդյան սկզբունքների մասին պարզաբանումներ»[3]:

Հիմնարար սկզբունքների վերաբերյալ նմանօրինակ մեկնաբանությունները և «անվտանգություն ու կարգավիճակ» տերմինների հաճախակի շեշտադրումը որոշ փորձագետների շրջանում մտահոգություն էին առաջացնում առ այն, որ դա ի վերջո կարող է հանգեցնել հիմնարար սկզբունքներից՝ մասնավորապես ժողովուրդների իրավահավասարության ու ինքնորոշման սկզբունքից Արցախի կարգավիճակի և անվտանգության խնդրի տարանջատման: Մի հարց է, երբ Արցախի կարգավիճակը փոխկապակցվում է ժողովուրդների իրավահավասարության ու ինքնորոշման սկզբունքի հետ, ինչը ենթադրում է սեփական ճակատագիրը որոշելու՝ Արցախի ժողովրդի իրավունքի ճանաչում, մեկ այլ հարց է՝ ուղղակի կարգավիճակի ու անվտանգության հարցի բարձրաձայնումը, որը կարող է խիստ տարբեր մեկնաբանություններ ունենալ՝ մշակութային ինքնավարությունից ընդհուպ մինչև Ադրբեջանի կազմում որևէ կարգավիճակ, որը, ընդ որում, կարող է տրվել նույնիսկ առանց Արցախի ժողովրդի կամքը հաշվի առնելու: Նույնը կարելի է ասել անվտանգության բաղադրիչի մասին, քանի որ անվտանգության անորոշ ձևակերպումը կարող է բավարարվել, օրինակ՝ խաղաղապահների առկայությամբ կամ այլ անվտանգային երաշխիքներով:

Ցավոք, 44-օրյա պատերազմից հետո էլ Հայաստանի գործող իշխանությունները շարունակեցին նախկին բանակցային գործընթացը և դրա արդյունքները նսեմացնելու, ձեռք բերված պայմանավորվածություններն ու համաձայնեցված սկզբունքները կասկածի տակ դնելու պրակտիկան: Պատերազմում կրած պարտության պատասխանատվությունը նախկին իշխանությունների և քաղաքական

---

[1] «Մադրիդյան սկզբունքների ընդունելի լինելը կախված է ԵԱՀԿ ՄԽ համանախագահների կողմից դրանց մեկնաբանությունից». Փաշինյան, 27.03.2019, https://news.am/arm/news/503748.html (այցելվել է 09.11.2021թ.):

[2] «Մեր մեծագույն խնդիրն է՝ չարժեզրկել մեր հերոսների հավաքական զոհողությունները, այլ դարձնել մի հզոր անկյունաքար, որի վրա պետք է կառուցվի և որի վրա արդեն կառուցվում է ազատ և երջանիկ Հայաստանը». վարչապետը մասնակցել է ԵԿՄ 12-րդ արտահերթ համագումարին, 07.04.2019, https://www.primeminister.am/hy/statements-and-messages/item/2019/04/07/Erkrapah/ (այցելվել է 09.11.2021թ.):

[3] «Բրատիսլավայում ստորագրվելիք փաստաթուղթ սեղանին չկա». Փաշինյան, https://armeniasputnik.am/20191204/bratislavayum-storagrveliq-pastatuxt-sexanin-chka-pashinyan-21313607.html (այցելվել է 09.11.2021թ.):

հակառակորդների վրա գցելու մոլուցքը այնքան մեծ էր, որ իշխող վարչախումբը սկսեց բանակցային գործընթացին վերագրել այնպիսի տարրեր, որոնք երբեմն ստիպված էին լինում հերքել ՄԽ համանախագահներն[4] ու նույնիսկ ՀՀ ԱԳՆ-ն՝ Շուշին նախքան պատերազմը բանակցությունների առարկա լինելու, առանց կարգավիճակի, հենց այնպես 7 շրջանները հանձնելու և այլնի մասին: Նույն տրամաբանության շրջանակներում շարունակվում էր կասկածի տակ դրվել հիմնարար սկզբունքների որոշակիությունն ու դրանց համապատասխանությունը հայկական կողմի շահերին:

Չնայած դրան՝ պատերազմից հետո սկզբնական շրջանում ԵԱՀԿ ՄԽ որոշ հայտարարություններ հույս էին ներշնչում, որ բանակցային գործընթացը կվերադառնա հիմնարար սկզբունքների ու տարրերի շրջանակ և կնպաստի խաղաղ գործընթացի հետագա ընթացքին: Սակայն, հայկական կողմի անսկզբունքայնության, իշխանությունների անպատասխանատու հայտարարությունների և գործողությունների արդյունքում ՄԽ համանախագահների հայտարարություններից աստիճանաբար դուրս մղվեցին հիմնարար սկզբունքների և Արցախի կարգավիճակի մասին հիշատակումները:

2. 44 - ՕՐՅԱ ՊԱՏԵՐԱԶՄԻՑ ՀԵՏՈ ԵԱՀԿ ՄԽ ՀԱՄԱՆԱԽԱԳԱՀՆԵՐԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՈՎԱՆԴԱԿԱՅԻՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

2020թ. նոյեմբերի 9-ից առ այսօր ԵԱՀԿ ՄԽ համանախագահները տարածել են թվով 9 համատեղ հայտարարություն[5], որոնցից միայն երկուսում է ուղիղ անդրադարձ

---

[4] Ответ российского сопредседателя в Минской группе ОБСЕ, Посла по особым поручениям МИД России И.В.Попова на вопрос СМИ относительно статьи Премьер-министра Армении Н.В.Пашиняна «Истоки 44-дневной войны», 13.01.21, https://www.mid.ru/foreign_policy/news/-/asset_publisher/cKNonkJE02Bw/content/id/4519475 (այցելվել է 09.11.2021թ.):

[5] Statement by the Co-Chairs of the OSCE Minsk Group, GENEVA, 8 October 2021, https://www.osce.org/minsk-group/500524 (այցելվել է 09.11.2021թ.), Statement by the Co-Chairs of the OSCE Minsk Group, NEW YORK, 24 September 2021, https://www.osce.org/minsk-group/498948 (այցելվել է 09.11.2021թ.), Statement by the Co-Chairs of the OSCE Minsk Group, MOSCOW, PARIS, WASHINGTON DC, 29 July 2021, https://www.osce.org/minsk-group/493945 (այցելվել է 09.11.2021թ.), Statement by the Co-Chairs of the OSCE Minsk Group, GENEVA, 28 May 2021, https://www.osce.org/minsk-group/487879, Statement by the Co-Chairs of the OSCE Minsk Group, MOSCOW/PARIS/WASHINGTON, 5 May 2021, https://www.osce.org/minsk-group/485558 (այցելվել է 09.11.2021թ.), Statement by the Co-Chairs of the OSCE Minsk Group, MOSCOW/PARIS/WASHINGTON 13 April 2021, https://www.osce.org/minsk-group/483416 (այցելվել է 09.11.2021թ.), Statement by the Co-Chairs of the OSCE Minsk Group, MOSCOW/PARIS/WASHINGTON, 16 February 2021 https://www.osce.org/minsk-group/478690 (այցելվել է 09.11.2021թ.), Statement of the OSCE Minsk Group Co-Chairs, BAKU/YEREVAN/MOSCOW, 14 December 2020, https://www.osce.org/minsk-group/473649 (այցելվել է 09.11.2021թ.), Joint Statement by the Heads of

կատարվել հակամարտության կարգավորման հիմնարար սկզբունքներին և տարրերին: Պատերազմից հետո առաջին անգամ ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահ երկրների պատվիրակությունների ղեկավարները համատեղ հայտարարությամբ հանդես եկան Ալբանիայի մայրաքաղաք Տիրանայում 2020-ի դեկտեմբերի 3-ին[6]: Սա, թերևս, մեզ համար հետպատերազմյան շրջանում ամենաընդունելի հայտարարությունն էր համանախագահների կողմից. մասնավորապես հայտարարության մեջ կոչ էր արվում տարածաշրջանից անհապաղ հեռացնել օտարերկրյա վարձկաններին, ինչպես նաև նշվում էր Լեռնային Ղարաբաղում և հարակից շրջաններում հոգևոր-մշակութային ժառանգության պաշտպանության կարևորության մասին:

Հակամարտության կարգավորման տեսանկյունից հայտարարության մեխը, թերևս, հետևյալ տողերն էին. «*ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահ երկրները վերահաստատում են իրենց հաստատակամ հավատարմությունը հակամարտությունների կարգավորման հարցում ուժի և ուժի սպառնալիքի չկիրառմանը: Նրանք վերահաստատում են իրենց հետևողական և միասնական դիրքորոշումը՝ հօգուտ հակամարտության* ***մնացած բովանդակային հիմնախնդիրների բանակցային, համապարփակ և կայուն կարգավորման՝ Հայաստանին և Ադրբեջանին քաջ հայտնի հիմնարար սկզբունքներին և տարրերին համապատասխան***»: Ըստ էության, համանախագահ երկրները արձանագրում էին, որ Արցախյան հակամարտությունը կարգավորված չէ, և չնայած պատերազմի արդյունքներին, համապարփակ կարգավորումը պետք է հիմնված լինի հիմնարար սկզբունքների և տարրերի վրա, այսինքն՝ այն պետք է հաշվի առնի նաև ժողովուրդների իրավահավասարության ու ինքնորոշման սկզբունքը, ինչպես նաև Արցախի կարգավիճակի հարցը:

ԵԱՀԿ ՄԽ հաջորդ պաշտոնական հայտարարության տեքստում՝ 2020-ի դեկտեմբերի 14-ին, թեև ուղղակիորեն չեն հիշատակվում հակամարտության կարգավորման հիմնարար սկզբունքները, սակայն հղում է կատարվում դեկտեմբերի 3-ի վերոհիշյալ հայտարարությանը. «*Հիշատակելով դեկտեմբերի 3-ին Տիրանայում ԵԱՀԿ նախարարական հայտարարությունը Մինսկի խմբի համանախագահ երկրների պատվիրակությունների ղեկավարների կողմից՝ համանախագահները*

Delegation of the OSCE Minsk Group Co-Chair Countries, TIRANA 3 December 2020, https://www.osce.org/minsk-group/472419 (այցելվել է 09.11.2021թ.):

[6] Joint Statement by the Heads of Delegation of the OSCE Minsk Group Co-Chair Countries, TIRANA 3 December 2020, https://www.osce.org/minsk-group/472419 (այցելվել է 09.11.2021թ.):

վերահաստատում են իրենց միասնական դիրքորոշումը՝ հոգուտ մնացած հիմնական հիմնախնդիրների համապարփակ և կայուն կարգավորման»[7]:

Վերջին անգամ համանախագահները տարածած պաշտոնական հայտարարության մեջ հիմնարար սկզբունքները հիշատակել են 2021թ. ապրիլի 13-ի հայտարարության մեջ. «*Համանախագահները շեշտում են, որ հատուկ ուշադրություն պետք է դարձնել վերջնական համապարփակ և կայուն կարգավորման ձեռքբերմանը՝ կողմերին քաջ հայտնի տարրերի և սկզբունքների հիման վրա*»[8]: Եվս մեկ հայտարարության մեջ՝ 2021թ. մայիսի 5-ին համանախագահները, նշելով երկարաժամկետ խաղաղության մասին, հղում են կատարում ապրիլի 13-ի հայտարարությանը: Դրան հաջորդել է համանախագահների ևս 4 պաշտոնական հայտարարություն, սակայն ոչ մեկում անդրադարձ չկա ո՛չ Արցախի կարգավիճակին, ո՛չ հիմնարար սկզբունքներին և տարրերին, ո՛չ էլ հղում է արվում նախորդ նմանաբովանդակ հայտարարություններին: Փաստորեն, 44-օրյա պատերազմից հետո համանախագահների տարածած 9 հայտարարություններից միայն 2-ում են ուղղակիորեն շեշտադրվում հիմնարար սկզբունքներն ու տարրերը, ևս 2-ում անուղղակիորեն՝ հղում կատարելով նախորդ հայտարարությունների վրա: Ընդ որում, այդ բոլոր հայտարարությունները տեղ են գտել դեռևս նախորդ արտգործնախարարի՝ Արա Այվազյանի պաշտոնավարման ժամանակ:

Վերջին 6 ամիսների ընթացքում, մասնավորապես Հայաստանում տեղի ունեցած արտահերթ խորհրդարանական ընտրություններից հետո, այդ թվում՝ ՀՀ նոր ԱԳ նախարար Միրզոյանի պաշտոնավարման ժամանակահատվածում, ԵԱՀԿ ՄԽ համանախագահների պաշտոնական հայտարարությունները հիմնականում սահմանափակվում են հումանիտար բնույթի, ինչպես նաև հայ-ադրբեջանական սահմաններին վերաբերող հայտարարություններով, իսկ Արցախի կարգավիճակի հարցը դուրս է եկել պաշտոնական հայտարարությունների օրակարգից: ՄԽ-ի նման գործելաոճը համահունչ է Հայաստանում և տարածաշրջանում տեղի ունեցող գործընթացներին, երբ մի կողմից Ադրբեջանը Արցախի հարցը համարում է փակված, նշում է Արցախի ցանկացած կարգավիճակի մերժման մասին, իսկ ՀՀ իշխանությունները կասկածի տակ են դնում Արցախի սուբյեկտայնությունը՝ դեպի Արցախ բարձր մակարդակի պաշտոնական այցերից հրաժարվելով, ռազմավարական փաստաթղթերում «Արցախի Հանրապետություն» եզրույթից խուսափելով,

[7] Statement of the OSCE Minsk Group Co-Chairs, BAKU/YEREVAN/MOSCOW, 14 December 2020, https://www.osce.org/minsk-group/473649 (այցելվել է 09.11.2021թ.):
[8] Statement by the Co-Chairs of the OSCE Minsk Group, MOSCOW/PARIS/WASHINGTON, 13 April 2021, https://www.osce.org/minsk-group/483416 (այցելվել է 09.11.2021թ.):

Ադրբեջանի հետ դելիմիտացիայի և դեմարկացիայի գործընթաց սկսելու պատրաստակամությամբ:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ԵԱՀԿ Մինսկի խումբը շարունակում է մնալ Արցախյան հակամարտության վերջնական և երկարաժամկետ կարգավորման միակ միջազգայնորեն ճանաչված ձևաչափը՝ առնվազն քանի դեռ կողմերից ոչ մեկը պաշտոնապես չի հայտարարել այդ ձևաչափից հրաժարվելու մասին: Հակամարտության անկյունաքարը միշտ էլ եղել է ժողովուրդների իրավահավասարության ու ինքնորոշման սկզբունքի իրացման համար արցախահայության պայքարը, որը տևական բանակցություններից հետո ամրագրվել է նաև հակամարտության կողմերի և համանախագահների կողմից՝ ի դեմս հիմնարար սկզբունքների և տարրերի:

Չնայած 44-օրյա պատերազմում հայկական կողմի կրած ծանր պարտությանը՝ ոչ ոք չի կարող կասկածի տակ դնել Արցախի ժողովրդի՝ սեփական ճակատագիրը ինքնուրույն որոշելու իրավունքը: Դա շատ լավ հասկանում է նաև միջազգային հանրությունը, այդ թվում՝ ՄԽ համանախագահությունը, ուստի պատահական չէ, որ պատերազմից անմիջապես հետո համանախագահները վերահաստատեցին իրենց հավատարմությունը հիմնարար սկզբունքների նկատմամբ: Սակայն վերջին ամիսներին ՄԽ համանախագահների պաշտոնական հայտարարություններում այդ սկզբունքների մասին հիշատակումների բացակայությունը, ինչպես նաև սևեռումը այլ՝ հիմնականում հումանիտար բնույթի հարցերի վրա, լուրջ մտահոգության առիթ են տալիս:

Հայկական կողմը պետք է ակտիվ քայլեր ձեռնարկի, որպեսզի բանակցային գործընթացում հաստատված հայտնի տարրերն ու սկզբունքները նորից դառնան ՄԽ հովանու ներքո տարվող պաշտոնական գործընթացի առանցքային բաղադրիչները: Հաշվի առնելով 3 հիմնարար սկզբունքներից 2-ի՝ Արցախի տարածքային ամբողջականության և ուժի չկիրառման խախտումը Ադրբեջանի կողմից՝ պետք է առավել մեծ ուշադրություն կենտրոնացվի մյուս սկզբունքը լիարժեքորեն կյանքի կոչելու և Արցախի ժողովրդի խախտված իրավունքները վերականգնելու հարցերին:

«ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառմամբ հրապարակված նյութը պաշտպանված է ՀՀ օրենսդրությամբ և միջազգային համաձայնագրերով: Հրապարակված նյութի բոլոր իրավունքների բացառիկ իրավատերը «ԼՈՒՅՍ» հիմնադրամն է:

*Նյութի ամբողջական կամ դրանից **քաղվածքների** վերարտադրումը թույլատրվում է իրականացնել միայն «ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառման և համապատասխան ակտիվ հղման տեղադրման պայմանով՝ պահպանելով «ԼՈՒՅՍ» հիմնադրամին պատկանող նյութերի օգտագործման կարգը:*